

**ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ՏԵՔՍՏԵՐԻ և ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ա.Վ.Մանուկյան

(Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ)

Ա.Վ.Դաշյան

(Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հատուկ մանկավարժության և հոգեբանության
ամբիոնի դասախոս՝ մ.գ.թ.)

Հանգուցային բառեր՝ լսողության խանգարում ունեցող երեխաներ, չլսողներ, գրավոր խոսքի զարգացման ցածր մակարդակ, ժեստերի լեզու, թանգարանային նյութեր, տեքստերի ընկալում, բառ - իմաստ – ժեստի ընկալում, հետազոտական աշխատանք, հարցում, հետազոտվողներ:

Հայտնի է, որ լսողության խանգարում ունեցող երեխաների գրավոր խոսքի զարգացումը սուրդոմանկավարժության կարևոր և բարդ խնդիրներից մեկն է: Մի շարք ուսումնասիրություններ (1, 2) փաստում են, որ լսողության խանգարում ունեցող երեխաների գրավոր խոսքի յուրացումը, դրա գործնական կիրառությունը, առաջ է բերում մի շարք բարդություններ: Բարդությունները պայմանավորված են առաջին հերթին նրանով, որ լսողության խանգարում ունեցող երեխաների՝ մասնավորապես չլսող երեխաների հաղորդակցման, ինչպես նաև մտածողության հիմնական միջոցը հանդիսանում է ժեստերի լեզուն: Այն՝ բնական լեզու է, որն ունի հարուստ բառապաշար և իրեն բնորոշ քերականական ինքնատիպ կառուցվածք, և հանդիսանում է որպես առաջնային լեզու այն երեխաների համար, ովքեր ուսուցանվում են հատուկ դպրոցներում, կամ դաստիարակվում են չլսողների ընտանիքում: Ժեստերի լեզվի միջոցով չլսող երեխան ստանում է պատկերացումներ և գիտելիքներ շրջակա աշխարհի մասին: Ժեստերը նաև խթան են հանդիսանում չլսող երեխայի սոցիալական և կոգնիտիվ ընդունակությունների զարգացման համար: Չլսող մանուկները ժեստերի լեզուն յուրացվում են ճիշտ այնպես, ինչպես հնչյունային լեզուն լսող մանուկները՝ հաղորդակցման ընթացքում:

Հայտնի է, որ տեղեկատվության ընկալումը և մտապահումը չլսողների մոտ կատարվում է պատկերների միջոցով, իսկ նրանց վերաբրտադրումը իրականացվում է ժեստերի միջոցով: Այդ առանձնահատկությունները արտահայտվում են նաև նրանց մտածողության վրա: Չլսող երեխաների մտածողության պատկերային տեսակը երկար ժամանակ գերակայում է և անցումը դեպի խոսքատրամաբանական

ձևը կախված է այդ երեխաների բառային խոսքի յուրացման հաջողությունից և մակարդակից:

Հատուկ ուսուցման պայմաններում, չլսող երեխաները սկսած նախապատրաստական դասարանից սկսում են յուրացնել երկու լեզուները՝ բառային և ժեստային, որոնք գտնվում են միմյանց հետ փոխկապակցվածության և ներազդեցության մեջ: Ժեստերի լեզուն հիմք է հանդիսանում բառերի իմաստների, նախադասություններում բառերի միջև կապերի ընկալման համար: Բառային խոսքը, իր հերթին, հարստացնում ժեստերի լեզուն, լրացելով նոր հասկացություններով(2, 4, 3):

Մանկավարժական փորձի ուսումնասիրությունները վկայում են, որ չլսողների մոտ բառային նյութի ընկալումը, նրա վերարտադրումը կատարվում է դժվարությամբ, նույնիսկ ժամանակակից տեխնոլոգիական միջոցների և մեթոդիկաների կիրառության դեպքում: Չլսող երեխաներն ավելի լավ են հիշում բառային նյութը, լավ են կատարում առաջադրանքները, եթե այն ամրակայվում է ժեստերի միջոցով: Պետք է նշել, որ *ժեստ-իմաստ-բառ* սկզբունքի կիրառումը բարձրացնում է երեխաների հետաքրքրությունը ուսումնական առարկայի և նյութի նկատմամբ, քանի որ նրանք լավ են հասկանում, թե ինչ է իրենցից պահանջվում:

Գրավոր խոսքի, մասնավորապես ընթերցանական նյութի յուրացումը, հատուկ դպրոցում ուղղորդվում է ժեստերի թարգմանությամբ (առարկայական դասերի ժամանակ՝ պատմության, աշխարհագրության և այլ, քանզի բառային նյութի ընկալումը չլսողների համար բարդ է): Առանց ժեստային թարգմանության, ինչպես նշում են մանկավարժները, չլսող երեխաները դժվարանում են ըմբռնել շատ բառերի իմաստները, մասնավորապես փոխհաբերական իմաստ արտահայտող բառերը, դժվարանում են վերարտադրել ընթերցած նյութը: Բացի այդ, փաստը նաև այն, որ ժեստերը լեզուն մնում է առաջնային որպես մանկական կոլեկտիվի հաղորդակցման միջոց նույնիսկ բարձր դասարաններում:

Մասնագետների ուսումնասիրությունները (1, 5, 4) վկայում են, որ լսողության խանգարում ունեցող երեխաների բարձր դասարանի աշակերտների մեծ մասը ունեն գրավոր խոսքի զարգացման ցածր մակարդակ: Այս երեխաները դժվար են յուրացնում՝

- բառապաշարը,
- նախադասությունների քերականական կառուցվածքը,
- բառերի վերջավորությունները և հոլովական ձևերը :

Դժվարանում են՝

- յուրացված բառերը կիրառել տարբեր իրավիճակներում,
- ճիշտ ընկալել և գործածել փոխաբերական իմաստով բառերը,
- ազատ հաղորդակցվել բառային խոսքով:

Ելնելով վերը նշվածից՝ մեր կողմից իրականացվել էր հետազոտական աշխատանք, որի նպատակն էր ուսումնասիրել.

- լսողության խանգարում ունեցող բարձր դասարանի աշակերտների վերաբերմունքը ընթերցանության նկատմամբ,
- ընթերցանության ընթացքում դժվարությունների առաջացման պատճառները,
- որոշել լսողության խանգարում ունեցող երեխաների մոտ ՀՊՄՀ-ի թանգարանային նյութի ընկալման մակարդակը,
- բացահայտել թանգարաններում, ցուցահանդեսներում հատուկ միջոցների առկայության անհրաժեշտությունը:

Վերը նշված հարցերը պարզաբանելու նպատակով մենք անցկացրել ենք ուսումնասիրություններ լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի 37 աշակերտների հետ: Հետազոտվողների 24%-ը 8-րդ դասարանի աշակերտներ են, 22 %-ը՝ 9-րդ դասարանի, 24%-ը՝ 10-րդ դասարանի, 14%-ը՝ 11-րդ դասարանի, իսկ 16 %-ը՝ 12-րդ դասարանի աշակերտներ են: Նրանցից 25-ը ունենին 4-րդ աստիճանի ծանրալսություն, 7-ը՝ խլություն, 5-ը՝ 2-3 աստիճանի ծանրալսություն:

Մենք իրականացրեցինք երկու հետազոտական աշխատանք: Հետազոտությունների ընթացքում մեր կողմից կիրառվել են մատչելիության և տարբերակված մոտեցման սկզբունքները: Կիրառվել են նաև հետևյալ ժամանակակից մեթոդները՝ հարցում, դիտում, զննական մեթոդներ (նկարահանում տեսախցիկով), ինչպես նաև փորձարարական և հավաստիացնող հետազոտության մեթոդները:

Առաջին հետազոտության ընթացքում անցկացրեցինք հարցում, որի նպատակն էր պարզել աշակերտների բառային տեքստերի ընկալման մակարդակը և նրանց վերաբերմունքը ընթերցանության նկատմամբ: Հարցվողներին առաջադրվեցին հետևյալ հարցերը.

1. Դուք սիրո՞ւմ եք կարդալ:
2. Ի՞նչ գրքեր եք կարդացել (հեքիաթներ, դպրոցական ծրագրային նյութեր):
3. Ինչպե՞ս է հեշտ ընկալել տեքստերի բովանդակությունը՝ բանավոր, բանավոր-մատնախոսությամբ, բանավոր և ժեստային թարգմանությամբ:
4. Դժվարության դեպքում դիմում են արդյո՞ք ուսուցչի օգնությանը (բառային բացատրությունների, ժեստային թարգմանության):

5. Սիրում եք այցելել թանգարաններ, ցուցահանդեսներ և հասկանում եք արդյո՞ք տեղեկատու նյութերը:

Հարցին «սիրում եք կարդալ» հարցվողների 59%-ը տվեցին դրական պատասխան, իսկ 41%-ը պատասխանեց, որ չեն սիրում կարդալ:

Պատասխանելով այն հարցին, թե <<Ի՞նչ գրքեր եք կարդացել>>, հետազոտվողների 19%-ը նշել է հեքիաթներ, 24%-ը նշել է միայն դպրոցական ծրագրի գրքեր, իսկ 57%-ը նշել է, որ ոչ մի գիրք չի կարդացել:

Հարցմանը մասնակցողների 89%-ը նշել է, որ չհասկանալու կամ դժվարության դեպքում դիմում է ուսուցչի օգնությանը, իսկ 11%-ը՝ չի դիմում օգնության:

Հարցվողների 97%-ը նշել է, որ սիրով այցելում են թանգարաններ, ցուցահանդեսներ, իսկ 3%-ը նշում է, որ չի այցելում այդպիսի տեղեր:

Պատասխանելով այն հարցին, թե նրանք կարողանում են կարդալ ցուցահանդեսներում և թանգարաններում ներկայացվող նյութերը հարցվողների 40%-ը նշեց, որ կարողանում է, 44%-ը չի հասկանում տեքստերի բովանդակությունը, իսկ 16%-ը պատասխանեց, որ դժվարանում է հասկանալ:

Պատասխանելով թե ինչպես է հեշտ հասկանալ տեքստի բովանդակությունը, հարցվողների 8%-ը նշեց, որ նրանց համար հեշտ է բանավոր-մատնախոսությամբ, 92%-ը բանավոր-ժեստերով, ինչպես նաև նշեցին, որ տեքստի բովանդակությունը հասկանալը միայն բառային ձևով բավականին դժվար է նրանց համար: Հետազոտվողների 11%-ը նշեց, որ 1-2 անգամ ընթերցելուց հետո հասկանում է տեքստը, 20%-ը նշեց, որ տեքստը հասկանում է 3 և ավել անգամ ընթերցելուց և բառային բացատրություններից հետո, իսկ 69%-ը նշեց, որ չի հասկանում ընդհանրապես:

Հարցմանը մասնակցողների 81%-ը նշել է, որ ուսուցչի ներկայացվող բացատրությունը օգնում է իրենց հասկանալ տեքստի բովանդակությունը, 19%-ը նշել է, որ հասկանում է միայն ժեստերի միջոցով:

Հարցվողների 43%-ը անձանոթ բառերի իմաստը հասկանում է, երբ դրանք գրվում են գրատախտակին և բացատրվում, իսկ 57%-ը հասկանում է միայն ժեստերի բացատրությամբ:

Հարցվողների 70%-ը նշեց, որ անձանոթ բառերի իմաստային բացատրությունից հետո հասկանում է տեքստը ամբողջությամբ, 30%-ը՝ որոշ չափով: Նրանցից 64%-ը կարողանում է տեքստից դուրս բերել անձանոթ բառերը, 36%-ը՝ դժվարանում է ինքնուրույն այն անել:

Հարցմանը մասնակցող աշակերտների 96%-ը ցանկություն հայտնեցին, որ ուսուցիչները օգտագործեն ժեստեր և բանավոր խոսք, իսկ 4%-ը նախընտրում է բանավոր խոսքով բացատրություններ:

Այսպիսով՝ հարցման արդյունքում բացահայտվեց, որ լսողության խանգարում ունեցող բարձր դասարանի աշակերտները ուզում են կարդալ, սակայն տեքստերում անձանոթ բառերի, բարդ նախադասությունների առկայությունը խոչընդոտում է դրանց իմաստն լիարժեք հասկանալը: Այդ իսկ պատճառով հետազոտվողների մեծամասնությունը նախընտրում են տեքստերը ընկալել հատուկ միջոցների օգնությամբ՝ բանավոր-ժեստերով միաժամանակ, իսկ անձանոթ բառերի իմաստն հասկանում են ժեստերով, ուսուցչի բացատրությունից հետո:


Երկրորդ հետազոտության նպատակն էր՝ որոշել լսողության խանգարում ունեցող երեխաների ՀՊՄՀ-ը թանգարանային նյութի ընկալման մակարդակը:

Սյուն հետազոտությունը մենք իրականացրեցինք 30 (9-12-րդ դասարան) ավագ դպրոցականների հետ, որոնցից 20-ը ունեին 4-րդ աստիճանի ծանրալսություն, 4-ը՝ 2-3 աստիճանի ծանրալսություն, 6-ը՝ խլություն:

Հետազոտական աշխատանքը մեր կողմից իրականացվեց 3 փուլով:

1-ին փուլն ընդգրկում էր աշխատանք ոչ ադապտացված թանգարանային նյութի հետ: Հետազոտվողներին բաժանեցին ոչ ադապտացված թանգարանային նյութեր, որոնք աշակերտները ընթերցեցին, սակայն նշեցին, որ տեքստերը դժվար են և անհասկանալի:

Ստացված արդյունքները ներկայացված են նկար 1-ում:




Նկար 1. Հետազոտվողների մոտ ՀՊՄՀ-ի ոչ ադապտացված թանգարանային նյութի ընկալման մակարդակի ցուցանիշները:

Նկար 1-ից պարզ երևում է, որ աշակերտների 70%-ը չհասկացան տեքստերը, քանզի առկա էին շատ անձանոթ բառեր, իսկ 30%-ը՝ հասկացան և կարողացան պատմել տեքստի բովանդակությունը: Հետազոտվողները միաձայն նշեցին, որ տեքստերը բարդ են:

Հետազոտական 2-րդ փուլը ներառում էր ՀՊՄՀ-ի թանգարանային նյութի ադապտացված տարբերակով աշխատանք, որի ժամանակ աշակերտներին բաժանվեց մեր կողմից պարզեցված, ադապտացված տեքստեր:


Ընթերցելուց հետո աշակերտների մոտ նույնպես ամրագրվեցին անձանոթ բառեր, որոնք պահանջում էին բացատրություն: Սակայն աշակերտները նշեցին, որ այդ տեքստերի պարզեցված համառոտ տարբերակի բովանդակությունը ավելի հեշտ էր ընկալել: Ստացված արդյունքները ներկայացված են նկար 2-ում:



Նկար 2. Հետազոտվողների մոտ ՀՊՄՀ-ի ադապտացված թանգարանային նյութի ընկալման մակարդակի ցուցանիշները:

Ինչպես երևում է նկար 2-ից հետազոտվողների 56.6%-ը լիովին հասկացան տեքստերի բովանդակությունը, 30%-ը՝ մասամբ հասկացան, իսկ 13.3%-ը ընդհանրապես չհասկացան:

Այնուհետև կազմակերպվեց հետազոտական աշխատանքի 3-րդ փուլը, որն ընդգրկեց ՀՊՄՀ-ի թանգարանային նյութի ընկալումը ժեստերի միջոցով: Տեքստերը ընթերցելուց հետո ուսուցիչը այն ներկայացրեց ժեստերի լեզվով: Աշակերտները լիովին հասկացան և ընկալեցին տեքստերի բովանդակությունը: Ստացված արդյունքները ներկայացված են նկար 3-ում:



Նկար 3. Հետազոտվողների մոտ ՀՊՄՀ-ի թանգարանային նյութի ընկալումը ժեստերի օգնությամբ:

Նկար 3-ից պարզ երևում է, որ աշակերտները (100%) լիովին հասկացան տեքստերի բովանդակությունը, քանի որ ժեստերի լեզուն նրանց առաջին լեզուն է,

իսկ բառային խոսքը դժվար է ընկալվում և պահանջում է լրացուցիչ միջոցների կիրառում:

Այսպիսով, մեր կողմից կազմակերպված հետազոտական աշխատանքները բացահայտեցին, որ լսողության խանգարում ունեցող երեխաների բառային խոսքի մակարդակը տարբեր է: Լսողության խանգարում ունեցողների մեջ կան անձիք, ովքեր ազատ կարդում և հասկանում են ընթերցածը, սակայն կան անձիք, ովքեր դժվարանում են կամ չեն հասկանում կարդացածը: Այդ առանձնահատկությունները ակնհայտորեն բացահայտվեցին մեր կողմից իրականացված հետազոտությունում: Այսպես, հետազոտվողների 30%-ի համար հասկանալի են անգամ բարդ, ոչ ադապտացված տեքստերը, 56.6 %-ի համար՝ միայն ադապտացված տեքստերը, իսկ 13.3%-ի համար անհրաժեշտ է սուրդոթարգմանչի օգնությունը:

Այսպիսով, մենք պարզեցինք.

- հետազոտվողների մեծամասնությունը ուզում է գրքեր կարդալ, սակայն դժվարանում են ընկալել տեքստի բովանդակությունը,
- տեքստերում առկա անձանոթ բառերը, բարդ նախադասությունները խոչընդոտում են հասկանալ տեքստերի բովանդակությունը,
- հետազոտվողների մեծամասնության համար հեշտ է հասկանալ տեքստի բովանդակությունը բանավոր-ժեստերով:
- Ժեստերի և բառային լեզուների հավասարաչափ կիրառումը չլսող երեխաների ուսուցման ընթացքում նրանց հաջողության գրավականն է:

Այսպիսով, հաշվի առնելով լսողության խանգարումներով անձանց լսողության խանգարման աստիճանը և խոսքի զարգացման տարբեր մակարդակը, հարկ ենք համարում նշել, որ նրանց համար թանգարաններում, ցուցահանդեսներում անհրաժեշտ է տեղադրել ադապտացված թանգարանային նյութեր, սուրդոթարգմանչությամբ տեսանյութեր, որոնք կօգնեն նրանց լիովին օգտվեն առաջարկված թանգարանային հարուստ նյութերից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Быкова Л.М., Вишневская Е.Е. Методика развития речи у глухих школьников в младших классах.- Л., 1979, С. 8-22.
2. Богданова Т.Г. Сурдопсихология. М., Издат.центр “Академия” 2002, С.38-42.
3. Дашьян А.В. Влияние словесно-жестового двуязычия на развитие памяти и внимания глухих детей. //Специальная педагогика и психология. Сборник научно-методических статей// - Ереван, Зангак-97, 2009, С.83-87.

4. Зайцева Г.Л., Развитие коммуникативных средств у выпускников школ глухих. ЖЕСТ И СЛОВО. Научные и методические статьи. М., 2006, С. 317-340.
5. Комаров К.В. Методика обучения русскому языку в школе для слабослышащих детей.- М., “Просвещение”, 1988, С.148-151.

РЕЗЮМЕ

ИССЛЕДОВАНИЕ УРОВНЯ ВОСПРИЯТИЯ ТЕКСТОВ И МУЗЕЙНЫХ МАТЕРИАЛОВ У СТАРШЕКЛАССНИКОВ С НАРУШЕНИЯМИ СЛУХА

А.В. Манукян

Кандидат педагогических наук, доцент кафедры специальная педагогика и психология

А.В. Дашьян

Кандидат педагогических наук, преподаватель кафедры специальная педагогика и психология

В данной статье представлен уровень восприятия текстов и музейных материалов учащимися старших классов с нарушениями слуха. Данные, полученные в результате исследования, свидетельствуют о необходимости применения адаптированных текстов и сопровождения жестового перевода во всех музеях Армении, что будет способствовать восприятию информации неслышащими.

SUMMARY

The Researches on the Perception Level of Museum Materias As Well As Texts Designed for Hearing Impaired High School Students.

A.V. Manukyan

Candidate of Pedagogical Sciences, associate professor at the Department of Special Pedagogy and Psychology at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University,

A.V.Dashyan

Candidate of Pedagogical Sciences, lecturer at the Department of Special Pedagogy and Psychology at Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

The articles present the levels of perception and understanding of museum information materials as well as perception levels of texts for hearing impaired high school students. In the course of the research, it became obvious from the collected data that adaptive textbooks with their gesture interpretation are needed to be applied at each of the museums in Armenia for those who have hearing impairment, which will be greatly conducive to the understanding and perception of the information.